1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրում գտնվող 05-060-0325-0084 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 24

ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2026 թվականի N 787-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 35-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ  
35 ԵՎ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 35-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 37 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ  
ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԻՆ  
ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի 2-րդ ենթակետը՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Վաղաշեն բնակավայր, 35-րդ փողոց, թիվ 35 և Վաղաշեն բնակավայր, 35-րդ փողոց, թիվ 37 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացած գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վաղաշեն բնակավայր, 35-րդ փողոց, թիվ 35-37 հասցեն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 24  
ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 788-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՇԻ ՄԵՐԻ ՆԵՐՍԵՍԻ ԳԵՂԱՄՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-003-0015-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎԱԴԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 3-րդ բաժնի 9-րդ մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 23-ի թիվ 12 արձանագրությունը Մարտունի քաղաքի բնակչուհի Մերի Ներսեսի Գեղամյանին իր անչափահաս երեխաների ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը գրավադրելու համաձայնություն տալու վերաբերյալ՝ **որոշում եմ**.

1. Բավարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակչուհի Մերի Ներսեսի Գեղամյանի (ծնված՝ 17.08.1986 թվականին) դիմումը և նրան թույլ տալ գրավադրել իր անչափահաս երեխաների՝ Կարեն Կարոյի Ղազարյանի (ծնված՝ 08.04.2010 թվականին) և Գևորգ Կարոյի Ղազարյանի (ծնված՝ 06.07.2014 թվականին) ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Արցախի փողոց, 11-րդ նրբանցք, թիվ 2 հասցեում գտնվող ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 05-003-0015-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 789-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
05-066-0303-0051 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.11 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ  
ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ  
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ, ԴՐԱ  
ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 412-Ն որոշումը, «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի №912-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը, Մարտունի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1645-Ա որոշումը, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի

2026 թվականի հունիսի 12-ի եզրակացությունը և Արմեն Կազբեկի Փինաչյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող 05-066-0303-0051 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.11 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող 05-066-0303-0051 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0.11 հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 38.91 քմ ներքին մակերեսով նկուղը (կառուցված՝ 2009 թվականին, արտաքին մակերեսը՝ 56.76 քմ), 113.93 քմ ներքին մակերեսով բնակելի տունը (կառուցված՝ 2009 թվականին, արտաքին մակերեսը՝ 146.81 քմ), 29.39 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2009 թվականին, արտաքին մակերեսը՝ 29.39 քմ), 89.57 քմ ներքին մակերեսով ձեղնահարկը (կառուցված՝ 2010 թվականին, արտաքին մակերեսը՝ 89.57 քմ), 27.84 քմ ներքին մակերեսով հացատունը (կառուցված՝ 2014 թվականին, արտաքին մակերեսը՝ 36.18 քմ), 52.34 քմ ներքին մակերեսով գոմը (կառուցված՝ 2014 թվականին, արտաքին մակերեսը՝ 67.06 քմ), 7.35 քմ մակերեսով գոմի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2014 թվականին, արտաքին մակերեսը՝ 7.35 քմ), 74.63 քմ ներքին մակերեսով ավտոտնակը (կառուցված՝ 2007 թվականին, արտաքին մակերեսը՝ 96.66 քմ), 154.29 քմ մակերեսով ավտոտնակի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2007 թվականին, արտաքին մակերեսը՝ 154.29 քմ), 15.19 քմ ներքին մակերեսով խորդանոցը (կառուցված՝ 2008 թվականին, արտաքին մակերեսը՝ 15.50 քմ) և 1.26 քմ ներքին մակերեսով սանհանգույցը (կառուցված՝ 2020 թվականին, արտաքին մակերեսը՝ 2.01 քմ) ճանաչել օրինական որպես Մարտունի համայնքի սեփականություն:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2024XUTHDX), ինչպես նաև գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ տեղեկանքը (փաստաթղթի համար՝ ԱՏ-23062026-05-0878, փաստաթղթի գաղտնաբառ՝ YT5A7B3YK32R):
5. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած անձ Արմեն Կազբեկի Փինաչյանին (ծնված՝ 29.01.1975 թվականին) օրինականացված 604.7 քմ ընդհանուր ներքին մակերեսով շինությունները և 0,11 հա մակերեսով

հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:

6. Հողամասին և նրա վրա կառուցված շինություններին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դեմեր թաղամասի 9-րդ փողոց, թիվ 6/1 հասցեն:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու նպատակով:
8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Հ. ՀՈԿԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 790-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-066-  
0310-0072 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՈՒԵԳԻՈՆԱԼ  
ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ  
ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 412-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի հունիսի 25-ի զեկուցագիրը և գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի 2026 թվականի ապրիլի 15-ի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի 05-066-0310-0072 կադաստրային ծածկագրով 0,15 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. Պարտավորեցնել Վանո Ավդալյանին համայնքապետարանի 900145109014 հաշվի համարին վճարել հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը՝ 1145000 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 791-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՌԱԴԻԿ  
ԷԴԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՆ ԷԴԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ա-6 ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8/1  
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 05-039-0128-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016 թվականի թիվ 631-Ն որոշման 3-րդ բաժնի 9-րդ մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 23-ի թիվ 13 արձանագրությունը Լիճք բնակավայրի անչափահաս բնակիչներ Ռադիկ Էդիկի Սուքիասյանին և Արեն Էդիկի Սուքիասյանին պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայր, Ա-6 թաղամասի 2-րդ փողոց, թիվ 8/1 հասցեում գտնվող 05-039-0128-0029 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը օտարելու համաձայնություն տալու վերաբերյալ՝ **որոշում եմ.**

1. Բավարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի անչափահաս բնակիչներ Ռադիկ Էդիկի Սուքիասյանի (ծնված՝ 17.11.2013 թվականին) և Արեն Էդիկի Սուքիասյանի (ծնված՝ 05.10.2016 թվականին) մայր Նելլի Վարդանի Սուքիասյանի (ծնված՝ 14.11. 1993 թվականին) դիմումը և նրան թույլ տալ Ռադիկ Էդիկի Սուքիասյանի և Արեն Էդիկի Սուքիասյանի անունից և շահերից ելնելով օտարել նրանց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայր, Ա-6 թաղամասի 2-րդ փողոց, թիվ 8/1 հասցեում գտնվող 05-039-0128-0029 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի բաժնեմասերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 792-Ա

**«ՍԱՄՎԵԼ ԵՎ ԳԵՂԱՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ  
ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 38/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ  
ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 23.12.2025 թվականի թիվ 171-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. «Սամվել և Գեղամ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց, թիվ 38/2 հասցեում գործող առևտրի կետում 26,67 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2026 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Սամվել և Գեղամ» ՍՊԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 120000 (հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 793-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍԻ 5-  
ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 12/1 ՀԱՍՅԵԻ 05-066-0126-0060 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ  
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
0,00829 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ  
ՀԱՅԱՏՈՒՆԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի, 35-րդ կետի «գ» և «դ» ենթակետերի պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումը, Լևոն Ռուբենի Մարտիրոսյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայր, Կենտրոն թաղամասի 5-րդ փողոց, թիվ 12/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0126-0060 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0,00829 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա կառուցված 5.94 քմ ներքին և 12.49 քմ արտաքին մակերեսով հացատունը (կառուցված՝ 2006 թվականին) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19062026-05-0022, տրված՝ 2026 թվականի հունիսի 19-ին) ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Լևոն Ռուբենի Մարտիրոսյանին (ծնված՝ 14.02.1972 թվականին):

2. Լևոն Ռուբենի Մարտիրոսյանին՝ վճարել հացատան արժեքը՝  $12.49 \times 20000 \times 0.1028 = 25679$  (քսանհինգ հազար վեց հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ և հողամասի արժեքը՝  $82.9 \times 792 = 65657$  (վաթսունհինգ հազար վեց հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 91336 (իննսունմեկ հազար երեք հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25

ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 հունիսի 2026 թվականի N 794-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ  
ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐ  
ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 6-րդ փողոցում կառուցված գազատար խողովակաշարին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դուրան թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 71/1 գազատար խողովակաշար հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 հունիսի 2026 թվականի N 795-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐՔԻՆ  
ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐ  
ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 8-րդ փողոցում կառուցված գազատար խողովակաշարին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 8-րդ փողոց, թիվ 55/1 գազատար խողովակաշար հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 հունիսի 2026 թվականի N 796-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ  
ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ՍՄԲԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մարտունու բաժնի պետի 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 55/1461 գրությամբ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի անչափահաս բնակիչ Գարիկ Սմբատի Խաչատրյանի (ծնված՝ 01.01.2011 թվականին) նկատմամբ կանխարգելիչ աշխատանքներ և հսկողություն իրականացնելու համար համայնքապետարանի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սարգիս Արշակյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 797-Ա

#### «ՖՐՈՒՆԶԵ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՐՈՒԹ ԱՐՄԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 26-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի և 244<sup>9</sup>-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2026 թվականի հունիսի 24-ի թիվ 01/30.5/6/4539-2026 գրությունը՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի բնակիչ Հարութ Արմենի Հովհաննիսյանը (ծնված՝ 21.07.1995 թվականին) ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-6 թաղամասի 1-ին փողոցի 68 հասցեում գտնվող 05-039-0221-0001 կադաստրային ծածկագրով հողամասն օգտագործել է առանց գործառնական նշանակության փոփոխության՝ **որոշում եմ**։

1. Հարութ Արմենի Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և լուծման օր նշանակել 2026 թվականի հուլիսի 15-ին, ժամը 12:00-ին Մարտունու համայնքապետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք.Մարտունի, Շահումյան փողոց, թիվ 2):
2. Վարույթի իրականացումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
3. Սույն որոշման մասին ծանուցել Հարութ Արմենի Հովհաննիսյանին (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա-8 թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 3):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝**

**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



Սույն որոշումով «Մարտունի ընդհանուր համայնքային մարզի» քաղաքի 35-րդ հողագրի 1-ին մասի 24-րդ և 26-րդ հատվածի, «Մարտունի ընդհանուր համայնքային մարզի» քաղաքի 29-րդ հողագրի 1-ին մասի 30-րդ հողագրի 1-ին մասի 4-րդ և 5-րդ հատվածի, «Մարտունի ընդհանուր համայնքային մարզի» քաղաքի 54-րդ հողագրի 2-րդ մասի և 244-րդ հողագրի 5-րդ մասի սահմաններով, որոնց ընդամենը ՀՀ քաղաքացիությունը և իրավունքները ունենում են մարտունի 2026 թվականի հունիսի 24-ի թվ 06/335/6/539-2026 օրոշումով հաստատված որի Հայաստանի Հանրապետության Գերագույնագիշտի մարզի Մարտունի համայնքի Այնթապի բնակավայրի բնակիչ Հարություն Արմենի Հովհաննիսյանը (թվագր՝ 27.07.1995 թվականին) ՀՀ Գերագույնագիշտի մարզի Մարտունի համայնքի Այնթապի բնակավայրի Ա-9 բնակավայրի 1-ին գտնվող 53 հասցեով գտնվող 05-023-023-0001 կադաստրային ծանկագրով հողատիրական օգտագործման և օգտագործման նշանակության փոփոխության որոշում է:

1. Հարություն Արմենի Հովհաննիսյանի նկատմամբ ծառայելի վարչական մարտնչությունը օր նշանակվել 2026 թվականի հունիսի 15-ին՝ ժամը 12:00-ին Մարտունի համայնքապետարանի փոխանի ղեկավարությամբ (հասցեն՝ ք. Մարտունի, Համայնքի փողոց, թիվ 2):
2. Հարություն Արմենիսյանից հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գերագույնագիշտի մարզի Մարտունի համայնքապետարանի փոխանի մարզային համակարգում հարգելով հանձնարարել:
3. Սույն որոշման մասին ծանուցել Հարություն Արմենի Հովհաննիսյանին իր անձնական Հայաստանի Հանրապետության Գերագույնագիշտի մարզի Մարտունի համայնքի Այնթապի բնակավայրի Ա-9 բնակավայրի 4-րդ գտնվող, թիվ 3):



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 798-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 7-րդ փողոցում կառուցված գազատար խողովակաշարին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վերին Գետաշեն բնակավայր, Վերին Դուրան թաղամասի 7-րդ փողոց, թիվ 66/1 գազատար խողովակաշար հասցեն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 25  
ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 799-Ա


### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ **որոշում եմ.**

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 13-րդ փողոցում կառուցված գազատար խողովակաշարին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամասի 13-րդ փողոց, թիվ 1/1 գազատար խողովակաշար հասցեն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ



2026թ. հունիսի 25

ք. Մարտունի



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 800-Ա

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 687-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ **որոշում եմ**.

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաք Մարտունի, Հիվանդանոցի 1-ին փողոց, թիվ 69 և քաղաք Մարտունի, Հիվանդանոցի 1-ին փողոց, թիվ 67 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացած գույքին նոր հասցե տրամադրելու և նոր առաջացած գույքի գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի կադաստրային էլեկտրոնային քարտեզը չափագրման տվյալներին համապատասխանեցնելու մասին» N 687-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
  - որոշման վերնագրի և 2-րդ կետի «չափագրման տվյալներին» բառերը փոխել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին» բառերով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 26  
ք. Մարտունի





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 801-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 688-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ **որոշում եմ**.

- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաք Մարտունի, Հ. Թումանյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 6, քաղաք Մարտունի, Հ. Թումանյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 4 և քաղաք Մարտունի, Հ. Թումանյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 2 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացած գույքին նոր հասցե տրամադրելու և նոր առաջացած գույքի գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի կադաստրային էլեկտրոնային քարտեզը չափագրման տվյալներին համապատասխանեցնելու մասին» N 688-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
  - որոշման վերնագրի և 2-րդ կետի «չափագրման տվյալներին» բառերը փոխել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերին» բառերով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 26

ք. Մարտունի



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 802-Ա

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՆԵԼԼԻ ՖՐՈՒՆԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՖՐՈՒՆԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԷԼՄԻՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՋԵՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով, նկատի ունենալով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունը կառուցված չէ կամ չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N-2387-Ն որոշման 48-րդ կետը, Էլմիրա Հազեյանի, Նելլի և Կարեն Կարապետյանների դիմումը՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայր, 6-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող նկուղի նկատմամբ Նելլի Ֆրունզի Կարապետյանի (ծնված՝ 01.01.1982 թվականին), Կարեն Ֆրունզի Կարապետյանի (ծնված՝ 09.06.1975 թվականին) և Էլմիրա Սամվելի Հազեյանի (ծնված՝ 19.09.1982 թվականին) շինությունների և

սպասարկման համար անհրաժեշտ 05-082-0078-0021 կադաստրային ծածկագրով իրավունքների պետական գրանցում ստացած 0,2024 հա մակերեսով հողամասի վրա օրինական կառուցված 17.82 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1965 թվականին) սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 6-րդ փողոց, թիվ 3 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հունիսի 26

ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 803-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդաձորի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի հունիսի 29-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 26  
ք. Մարտունի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 804-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԵՆԻԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ **որոշում եմ**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդենիկի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի հունիսի 29-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հունիսի 26  
ք. Մարտունի